**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՇՁԲ-18/01»-1**
**02.07.2018թ. N «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՇՁԲ-18/01» ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ք. Երևան 9 օգոստոսի 2018թ.

«Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա. Գաբրիելյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ատաշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Ապետնակյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետը, Կողմերի միջև 02.07.2018թ. կնքված N «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՇՁԲ-18/01» «Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի» (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5-րդ կետը, Պայմանագրի շրջանակում Պատվիրատուի կողմից լրացուցիչ աշխատանք ձեռք բերելու պահանջարկը և Կապալառուի 08.08.2018թ. համաձայնությունը, հաշվի առնելով, որ Պայմանագրի շրջանակում Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը՝ Կողմերը համաձայնեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.2 Պայմանագրի 5.1 կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 3 748 776 (երեք միլիոն յոթ հարյուր քառասունութ հազար յոթ հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ, որից 624 796 (վեց հարյուր քսանչորս հազար յոթ հարյուր իննսունվեց) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:»:

1.1.3 Պայմանագրի հավելված թիվ 1-ը (ծավալաթերթ-նախահաշիվ) լրացնել նոր աղյուսակով՝ համաձայն հավելվածի:

1.1.4 Պայմանագրի հավելված թիվ 3-ի «օգոստոս», «սեպտեմբեր», «հոկտեմբեր», «նոյեմբեր», «դեկտեմբեր» և «Ընդամենը» սյունակներում «3 450 000» թիվը փոխարինել «3 748 776» թվով:

**2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից այն ստորագրելու պահից:

2.2 Սույն համաձայնագիրը և համաձայնագրի հավելվածը հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մաս:

2.3 Սույն համաձայնագրում չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կնքված է հայերենով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| «Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ | «Ատաշին» ՍՊԸ |
| Հասցեն՝ ք. Երևան, Ա. Մանուկյան 31 | Ք. Երևան, Նոր Նորք 9 զ., 48 շենք, 10 բն. |
| ՀՎՀՀ 01805343 | ՀՎՀՀ 00901734 |
| «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ Մալաթիա մ/ճ | «ԱՐԱՐԱՏ ԲԱՆԿ» ԲԲԸ |
| h/h 2474233147200000 | Հ/Հ 1510031428830100 |
| Տնօրեն՝ | Տնօրեն |
| ____________ Ա. Գաբրիելյան | ____________ Տ. Ապետնակյան |
| Կ.Տ. | Կ.Տ |

Հավելված
<<9>> օգոստոսի 2018թ. կնքված
թիվ «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՇՁԲ-18/01»-1 ծածկագրով համաձայնագրի

# «ՇԵՆՔԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ (ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՇԽԱՏԱՆՔ)

| Հ/հ | Հիմնա-վորում | Աշխատանքների անվանումը | Չ/մ | Քանակը | Արժեքը, հազ. դրամ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | միավ. | ընդամ. |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 16 | 17 |
| | | 1. Ներքին հարդարման աշխատանքներ | | | | |
| 1 | 11-11 | Հատակների բետոնյա շերտի անհարթությունների, թեքությունների, քայքայված հատվածների լիցք թեթև բետոնով 7,5 դասի 3-5 սմ հաստությամբ | մ³ | 7,10 | 27,88 | 197,98 |
| | | Ընդամենը 5՝ | | | | 197,98 |
| | | Ընդամենը 1-5՝ | | | | 197,98 |
| | | Ընդամենը վերադիր ծախսերով (13,3%) | | | | 224,31 |
| | | Ընդամենը շահույթով (11%) | | | | 248,980 |
| | | ԱԱՀ-ով (20%) | | | | 298,776 |

»:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ
Հասցեն՝ ք. Երևան, Ա. Մանուկյան 31
ՀՎՀՀ 01805343
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ Մալաթիա մ/ճ
հ/հ 2474233147200000
Տնօրեն՝
_______Ա. Գաբրիելյան
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«Ատաշին» ՍՊԸ
Ք. Երևան, Նոր Նորք 9 զ., 48 շենք, 10 բն.
ՀՎՀՀ 00901734
«ԱՐԱՐԱՏ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 1510031428830100
Տնօրեն
_______Տ. Ապետնակյան
Կ.Տ